ՄԱՍԻՔ

(Տես յէջ 313)

Թէպէտ և ստոյգ է թէ այս լերանս կազմութիւնն և փոփոխութիւնքն եղած է հրաբղխային զօրութեանց ձեռքով, յորոց անժխտելի ապացոյցութիւնքն ալ յառաջ եկած են, սակայն դեռ բոլորովին ստոյգ չեն անոր բոց կամ նիւթ արձակելն 'ի պատմական ժամանակս։ Վասն զի մեր նախնեաց հնագոյն յիշատակն Մեծ փլաստիւն վրայ, յորմէ եղաւ և վիհն, հրոյ և ծխոյ վրայ չի խօսիր. այլ «լեալ ասեն յաղագին իմն չարժմանէ, զոր պատմեն որք բազմաչրջութեամբ՝ Պրտղոմեայ ասպարիզաց՝ զբնակութիւն մարդկան չափեցին». և Հայոց վիպասանքն ալ Արտաշէս Բի և անոր որդւոց ժամանակ, չեն յիշեր զՄասիս։ Ս. Եփրեմ կը յիշէ, թէ գրեթէ յամի 340—1 մեծ երկրաշարժ և պատառմունք եղեր են Հայոց լերանց վրայ. ծխով և բոցով, լերինք իրարու զարնուեր և դարձեալ միացեր են, բայց Մասիս անունը չի դներ [1]։ Նոյնպէս Երևանայ ասմանութեան ատեն պատմեալ մէջ հաւատարմագոյնն Զաքարիա Պարկաւաց՝ Մասեաց շարժը և ներգործութիւնը չի յիշեր. իսկ ուրիշ յիշատակագիր մը կը պատմէ զշարժն «ի յԱւագ լեռն, Մասիսէ մինչև 'ի բլուրն Շամիրամայ». ուրիշ մ'ալ առանց Մասիսի անունը տալու՝ լերանց պատառուածը կը յիշէ և բոց ծիրանացեալ անոնցմէ։ Դայնէկս գերմանացի ճանապարհորդին պատմածն ալ չատուգուեցաւ, թէ յամի 1783 յ3 յունուարի, և 'ի 22 փետրուարի, հեռուէն Հիւսիս—Արևելեան կողմէն Մասեաց վրայ կրակի բոց տեսնուեր է. կ'ըսեմ չատուգուեցաւ, վասն զի վերջէն էջմիածնի վարդապետը և այն կողմերուն բնակիչքն ըսին թէ երբէք այնպիսի բան տեսած չեն։ Մեր դարուն յամի 1814 սառի մեծ կոյտ մի Մասեաց վրայէն փրթաւ և ինկաւ, և ոմանք ռամիկ ժողովրդէն կարծեցին թէ անոր տակէն տապանին կտորներէն գտան։— Սակայն հին հրաբղխային զօրութիւնն՝ որ այնքան դարերէ 'ի վեր գադրած էր, մեր ատեն նորէն երևցաւ, ահաւոր նշանով և աղետալի արդասիքներով. յամի 1840 յուլիս 2ին ըստ նոր տոմարի, արեգական մոնելէն կէս ժամ առաջ, օդը պարզ և հան-

1 Ս. Եփրեմի այն գրուածը որ է ընդդէմ ամենց որք երկրաշարժը կը համարէին թէ երկրիս ուռելէն կ'ըլլայ և ոչ թէ պարզապէս Աստուծոյ կամքէն, մեր նախնեաց հայկական թարգմանութեան մէջ կը պակսի, և յունարէն բնագրին մէջ կը գտնուի, յորմէ առնուած է և լատինն. At dicite nobis rursus modum, quomodo per terraemotum *Montes Armeniae* ab invicem dissiti, in mutuum quasi conflictum impellantur; ita ut *ignis* videatur excitari, plurimumque *fumare*, en sic satis etiam longa loci intercapedine remotis; rursusque locorum intervallis disjuncti montes, singuli suo ordine ac loco consistant? Quis ergo hunc modum adnunciaverit? — (Գործք Ս. Եփր. հտ. գ. 48):

digitised by A.R.A.R.@

դարտ էր, երկրի այնպիսի ահաւոր ցնցումն եղաւ և գոռում գոչում մը լեռնէն մինչև հեռու տեղեր, որ լսողներու և գիտուն քննողներու վկայութեան համեմատ՝ երկրիս ամենէն սաստիկ շարժումներէն մին համարուեցաւ։ Այս եղաւ գրեթէ կրկին անգամ՝ աչք գոցելու բանալու միջոց, թէպէտ և վերջէն ժամ մի տևեց տկարացած ներգործութիւնը։ Առաջին րոպէին բոլոր հազարամեայ շէնքեր աներևութացան իրենց բնակիչներովն. Ս. Յակոբայ վանքը իրեն աղբիւրովն վար ինկաւ, և վէհն գուրս ցատքող ահաւոր քարերն հեղեղի պէս վար գլորելով մեծ և բալմամարդ Ակռռի աւանդապիւրը տկար տիպոյ մը պէս ջախջախեցին, և բնակիչներովն և ամենայն իրովք հողոյ տակ թաղեցին։ Սև և կրակի գունով ծուխը Մասեաց գագաթէն վեր բարձրացաւ, և սաստիկ ծծմբոյ հոտը տարածուեցաւ. հարիւր կենդինար ծանրութեամբ, 250–300՝ և աւելի շրջապատով քարեր հինգ վեց մղոն հեռու նետուեցան. քարանց, սառերու, հողոյ և աղմոյ խառնուրդը լերան հիւսիս–արևելեան կողմը ծածկեց մինչև Երասխայ եզերքին մօտերը։ Ոմանք ի սկզբան կարծեցին թէ լերան գագաթէն կոտոր մը փրթելով այսչափ մեծ ՁԱՍՍ հասուց, և այսպէս աղ լրագրաց մէջ հրատարակուեցաւ, ինչպէս Հելուետիոյ մէջ յամի 1806, Ռասէրկ լեռան կոտոր մի փրթելով Կոլտոյ Հովտին վրայ ինկաւ, և անոր մէջ գտնուող երեք գիւղերը կործանեց. բայց վակնէր գերմանացւոյ մանր քննութիւնը, որ երեք տարի վերջը հօս եկաւ 1844, և վկայութիւն ականատեսից[1], և ոմանց թուղթը՝ զոր նոյն օրերը առ մերս գրեցին, և որք մեր դիւանաց մէջ կը պահուին, անտարակոյս հաստատեցին՝ որ լերան դնդերաց ներքին հրաբղխային բռնութիւնը թէպէտ և բոցաշունչ չէր, բայց ոգեօք և չոգեօք պատառուածներ առաջ բերաւ, վէհն հին և մեծ պատառուածին վերայ, արևելեան և հարաւ–արևելեան կողմէն, այն կէտէն՝ զոր Հայք Կարմիր քարափ կ'անուանէին, սև մուխ արձակելով և կարմրագոյն ծուխ մը. մինչդեռ ահաւոր ապառաժները կը ցնցէր, օդոյ մէջ ցրուելով ձեռակերտ շինուածները ամբողջովին, ինչպէս որ միաբան վկայեցին Հայք, Քուրդք և Թաթարք՝ որոնք իրենց հօտին պահպանութիւն կ'ընէին վէհն վեր արօտի մէջ։ Միայն պարզ հրեղէն ծուխ չէր արձակուածը, թէպէտ և կարմիր էր, այլ նաև ջրեղէն չոգի կար, որ նոյն գիշեր եկած անձրևէն իմացուեցաւ, և որ այն կողմերը չի հանդիպեր

1 Այս ամէն հանդիպածներուն գլխաւոր վկայ և պատմիչ էր «Պաղաթիէլ Խոնայեանց», եղբայր «Ստեփան Աղայի», որ Ակռռի գիւղին գլխաւորն էր և ասպնջական բառոդի որ և բոլոր իւր ընտանեօքը այն սարսափելի գիշերը անհետացած եղաւ։ Պաղաթիէլ Ոյոն ժամանակ գիւղէն վեր արօտներու մէջ կը գտնուէր, մղոն մը և աւելի հեռու արևմտեան կողմէն։ Նոյնը վկայեցին նաև Նասիպ Մկրտչեան և Յովհան Յովհաննիսեան, որոնց թարգմանը էր առ Վակնէր՝ Աբովեան գիտնականն և առաջին այցելու Մասեաց գագաթեան։ Նոյն ժամանակը մեզի գրուածներն ալ նոյն տեղէն՝ ասոնց համաձայն են։

digitised by A.R.A.R.@

այն եղանակին և օդոյ պարզութեան ատեն։ Փիչ վերջը ծխոյն գոյնը փոխուելով թանձր սևութիւն մ'առաւ, երբ սարսափելի ժայռից պայթմանց, և մեծամեծ դուրս նետուած քարերուն ձայնը տկարացաւ. իսկ այս ժայռերը և քարերը և հողային հոսանքը գրեթէ 25 ռուս մղոնաչափ վերստ տեղ 20′–200′ թանձրութեամբ ծածկեցին, և յուլիս 6 ին նորէն երկրաշարժ մ'եղաւ որ առային ժայթքմանէ դուրս նետուածները վերէն վար մղեց. յուլիս 8 ին նորէն երեք անգամ երկրաշարժ եղաւ մեզմ կերպով։ Լերան վերին կողմերուն ձևը փոփոխութիւն չի կրեց, ինչպէս որ ոմանք կը պատմէին, այլ միայն ստորոտն և վէրին եղերաց մաս մը. Ս. Յակովբայ աղբիւրը գըրեթէ ցամքեցաւ, և անոր արևելեան կողմէն խրամ մը բացուեցաւ 20′ խորութեամբ և 30′ լայնութեամբ, ուսկից պղտոր և ծծմբահոտ ջուր կը վազէր. Ս. Յակովբայ վանքին վրայ գլորած քարերը բարձր հովիտ մը ձևացուցին, և բլրոյ նման ժողովեցան եկեղեցւոյն և անոր պարտիզին վրայ։ Նոյնպէս նաև Ակոռին աւերակաց տակ թաղուեցաւ. անոր աղբիւրը ծծմբոյ համ առաւ և դառնացաւ, Գիլնոյ գետոյն (Գարասու) յատակին մաս մ'ալ լեցուեցաւ։— Դուրս նետուած քարերուն գլխաւոր տեսակներն էին որձաքար և պորփիւր, փայլուն բիւրեղներ փէյոսփաթի, որոնք առային երևցող պասատը և հրաբղխային եղնգնաքարը obsidian ծածկեցին։— Այս ամէն երևոյթներէն հետևեցուցին որ Մասիս հին ատեն սոսկալի հրաբուղխ մ'էր, և հիմա ալ դեռ բոլորովին մարած չէ, հրահալ նիւթերը անոր խորերը իջեր են. և կարծես թէ ջրամբար կամ մեծ ծով մը կայ, անոր մէջտեղը ձեանց հալելով և այլ և այլ ճեղքուածներէն ներս թափանցելով, ուսկից շատ քիչ բան դուրս կ'ելնէ, և Գիլնոյ գետը միայն՝ որ պէտք էր ամառ ատեն չատնալ՝ ձմեռ ատեն աւելի առատ կ'ըլլայ. այս պատճառաւ կը կարծուի թէ ներսէն ջուր կ'ընդունի։ Այսպէս ներսէն և դրսէն ջրոյ առատութիւն և սառոյց ըլլալով, բաւական չեղաւ որ հրաշունչ ճեղքուածներ առաջ բերէ Մասիս. այլ և շոգւով, ջրով և աղմով գործը լմնցուց, որով կրակի ժայթքմունքէն քիչ պակաս մեծամեծ վնասներ հասուց։— Հուսիսոյ մեծ երկրագէտն (որ յամի 1829 բառոդի հետ Արարատեան լերանց քննութեան կ'ուղէր գալ) կը համարի թէ Ասիոյ մէջ երեք մեծ շրջակայք կան հրաբղխից, յորս արևմտեան կողմէն է երկիր Ատրպատականի, Հայոց, Ափշերոնի և կովկասու. իսկ կեդրոն և կէտ անոնց ստորերկեայ ներդործութեանց՝ Արարատեան լերինքն են։— Վերոյիշեալ մեծ երկրաշարժէն սաստիկ եղաւ Մասեաց արևելեան կողմը. Նախճաւան գաւառին մէջ գրեթէ 6000 տուն կործանեցաւ, նոյնպէս ոչ սակաւ 'ի Շարուր, 'ի Մակու, և հարաւային կողմը 'ի Պայէզիտ, արևմտեան կողմը 'ի Սուրմաւի. իսկ հիւսիսային կողմը, երկրաշարժէն՝ աւելի մեծ եղաւ կործանումն և աւերմունք։ Երկու մեծամեծ պատառուածներ առաջ

digitised by A.R.A.R.@

եկան Քարահունչ Համբատայ Սիւնեաց գիւղին մէջ, և բնակչաց կարծեաց համեմատ՝ հրեղէն քարեր ալ վեր կը նետէին։ Քանի մը տարի ետքը կարծուեցաւ որ գիւղիս մէջ եղած մեծ պատառուածը գոցուեր է, բայց վերջի ատեններս նորէն լայնացաւ, այնպէս որ յամի 1889 բնակիչք ուզեցին փոխել իրենց բնակութեան տեղը։

Մասնաց վրայ յաճախ կը հանդիպին մասնական շարժմունքներ տարբերաց, այսինքն հիւսք ձեան և սառուցի վար գլորումներ, տեղացուց ըսածին համեմատ՝ քանի տարին անգամ մը կտոր մը փրթելով վար կ'ինկնայ քարի հետ խառնուած, և ասոնցմէ՝ Մորիէ անդրիացոյն կը ցուցընէին վհին վերին բերնին վրայ մեծ կոյտ մը, զոր կարծեմ թէ Հայք Սառցատուն կ'անուանէին, և որ տարուէ տարի աճելով՝ շատ կը ծանրանայ, և ներքէն ալ քայքայելով, կը գլորի կ'ինկնայ լերան կողին վրայէն անդնդոց մէջ, ահագին ձայնով և սարսափելի զօրութեամբ. ուստի նոյն ճանապարհորդն՝ ասոր կը յարմարցընէ աշխարհահռչակ Տասսոյ իտալացի դիւցազներգակ քերթողին հետեւեալ տողերը.

Treman le spaziose atre caverne,
L'aer cieco a quel rumor rimbomba.
Թնդան ընդարձակ քարայրք արշնաթոյրք,
Բոմբիւնս որոտան առ դղորդն՝ այերք կոյրք։

Արդեօք ինչ բանի պիտի նմանցընէր սա Ակուռոյ կործանման վերոյիշեալ ձայներն և ազէաքը։

Տէր Յովհան Ոսկերչեան իւր պատմական Ցիշատակարանին մէջ հարիւր տարի առաջ, այսպէս կը գրէր այս շարժմանց և կործանմանց վրայ. « Ես Յօհան քահանայ Մարտիրոսեան Էջմիածնի, 'ի 26 ամի կենդանոյս, այն է 'ի 20 օգոստոսի ՌՄԼԶ թուին Հայոց 1788, վասն ուխտից Նպաստութեանց աղօթատեղեաց սրբոյ Հայրապետին Յակոբայ Մծբնացւոյն, յաւուր ուրբաթու ընդ երեկս՝ 'ի կաք յայգիս գեղջն Արկուռոյ, որք 'ի ստորոտս լերին են. և գայր մեզ ձայն 'ի վերուստ 'ի լեռնէն իբրև ահեղ որոտման կամ մեծամեծ թնդանօթից. և հարցեալ ցշինականս գեղջն, թէ զինչ իցեն այսոքիկ ահագին դղրդմունք և գոչումն լերինն. և նոքա տեղեակս արարին զմեզ, թէ ձիւնն փլանի, և անտի արձագանգք ձորոցն թնդան. իսկ մեք ընդ առաւօտն հայեցեալ իբր առ փոր լերինն, տեսաք զի յարևմտից կուսէ առապար մի փլուզեալ էր զձիւնն դիզացեալ 'ի վերայ իւր, և թանձրութիւն փլուածոյն երևիւր իբր 8 կամ 10 բոպէս մարդաքայլ ճանապարհի »։— Բաւական սաստիկ և նորօրինակ ձայներ կը լսուին ամառ ատեն սառերու ճարճատմամբ, ցորեկէն ետքէ ամենէն աւելի տաք երկու ժամերու ատեն. դարձեալ սարսափելի ձայն կը հանեն հեղեղի նման վար վազող անձրևք խառն քարերու հետ, նոյնպէս փայլատակունք և եղեկտրական երևոյթներ շատ պայծառ կ'ելլան

digitised by A.R.A.R.@

հոն։ Թուի թէ այս ամէն բանի ականջալուր և ականատես եղեր է մեր հին աղօթողն, որ կը խնդրէ՝ Յասոյի պէս նմանաձայնութեամբ՝ աղաղակել «ի լեռնատարաւի բնդմանէ, ի վիմագոր և ի քաւարագնաց քարէ»։

Սանդամանդ. Ջուրջ.— Օդաբանական տեսութեամբ նշանաւոր է Մասեաց ձեան կամ մշտնջենաւոր սառամանեաց սահմանին բարձրութիւնը, որ Եւրոպիոյ Ալպեանց վրայ չի հասնիր մինչև 9000′, կովկասու վրայ հազիւ մինչև 15,000′ կը հասնի, իսկ Աւագ Մասեաց վրայ որ գրեթէ քանի մը աստիճան դէպ 'ի հարաւ կ'իջնայ քան միւս լեռները մինչև 13,000′։ Հիւսիսային ստորոտին վրայ՝ որ տափարակ է աւելի, ձեան սահմանը աւելի վար է, և խիտ սկլիկ névé ընդարձակ դաշտերը կը ծածկէ. իսկ հարաւային կողմը աւելի սրածայր ըլլալով՝ ձեանց սահմանն ալ բարձրագոյն է, և թուխ յատակին վրայ ճերմակ մանեկի ձևեր կազմելով, ընդարձակ ձորերու ջրանցից մէջ կը մնան։ Եւ այս է զարմանալին՝ որ թէպէտ Աւագ Մասիս մինչև 9250′ կամ 3000′ լերան գագաթէն մինչև 'ի վայր մշտնջենաւոր ձիւնով ծածկուած է, բայց գագաթէն հարիւր ոտք վար մեծ ժայռ մը կայ սև և մերկ, ոչ այնչափ ուղիղ և սրածայր դրից պատճառաւ, այլ բնագիտաց կարծեաց համեմատ, ձեան մետաղական նիւթոց բաղաւորութեան համար։ Իսկ հարաւային կողմը տեղ մնայուն տեղ է մինչև 12,000′, մինչ հիւսիսային կողմը՝ աւելի վար։ Այս կողմը միայն կը գտնուի Պառնատ կամ Պառնատոն մեծ վիհն բերանը, զոր մեր աղգայինք Պառցատուն կ'անուանէին, որ թէպէտ շատ ընդարձակ բան մը չէ, բայց նման է բոլորովին Ալպեանց և ուրիշ լեռանց ծանօթ սառնակներուն, և ձիւնալից ծործորներէն վար ըլլալով՝ բոլոր ձիւները անոր վրայ կը գիզուին. երկայնութիւնն է մղոն մը, իսկ լայնութիւնը՝ 160—300 Ջ. լեռան 7500—9500′ բարձրութեան մէջտեղ։— Ջիւնագծին բարձրութեան պատճառ կը համարուին՝ կլիմայն կամ Արարատեան նահանգին օդոյն ցամաքութիւնը, Մասեաց՝ ուրիշ լերանց հետ հաղորդակցութիւն չունենալն, զոր առնին ովկասեանք և Ալպեանք, որով քիչ ձիւն կու գայ հոս, և երբասխայ դաշտն՝ որ հիւսիսէն և արևելքէն լերկ և ողորկ լեռներով շրջապատած է, ընդունելով արեգական ճառագայթից ցոլմունքը, օդը կը տաքցընէ և ցրտութիւնը կը մեղմացընէ։

Մասեաց վրայ ուրիշ նշանաւոր օդային երևոյթ մ'ալ կը տեսնուի, զոր գիտեն գեղացիք և քննող ճանապարհորդք. այսինքն, դաշտին երեսէն վեր բարձրանալը գոլորշիով խառն օդոյ. վասն զի ամառ և աշնան առեն գիշերը և արշալուսին լերան գագաթը բոլորովին յլատակ և պայծառ կ'երևի, բայց արեգական ծագելէն վերջը դաշտին վրայ՝ տաքցած օդն ալ կը սկսի բարձրանալ դէպ 'ի լերան կողերը, և ձեան սահմանը հասնելուն պէս՝ չոչի կը դառնայ, և ամպ մը ձևացը-

digitised by A.R.A.R.@

նելով՝ գրեթէ արեգական ծագմանէն երեք կամ չորս ժամ ետքը լերան գագաթը կը ծածկէ մինչև 3000՝, և անոր չորս կողմը կը դառնայ մինչև արևուն մուտքը. և երբ գետինը կը զովանայ և ալ ևս տաք օդ վեր չի բարձրանար, ամպը կը փարատի, և դարձեալ կապոյտ երկնից տակ սպիտակ կը փայլի լերան գագաթը. իսկ Երասխայ դաշտին չորս կողմը դանուած լեռներն այն հզանակին բոլորովին ազատ ըլլալով ձիւնէն, որոշ և պայծառ կ'երևնան ըստ ամենայնի, և միայն Մասիս խորհրդաբար քօղարկեալ կը մնայ։ Այս պատճառաւ շատ անդամ ամպով ծածկեալ կը նկարուի պատկերաց մէջ, և գագաթը տեսնել փափաքողները կը տանջէ։

Այս կողմերուն բնակիչներն իբրև եղանակաց որոշիչ նշան կը համարին՝ Մասեաց վրայ ձիւն իջնալը և դիզուիլը, և ապա հալիլը, և լերան գալար կողերուն երևնալը, և ըստ այսմ մշակութեան գործերը կը պատրաստեն և կը կատարեն. հիւսիսային կողմանց բնակիչքն ալ՝ որ Արարատեան դաշտին մէջ կը բնակին՝ փոխանակ հարաւ ըսելու կ'ըսեն Արևելք, Արևմուտք, Հիւսիս, Մասիս։— Մասեաց ձիւներուն համեմատական նուազութեան համար՝ ջրերն ալ առատ չեն, և շատ չոր կը համարուի, մանաւանդ եթէ Արագած լերան հետ բաղդատուի, յորում գրեթէ քառասուն աղբիւր կայ, իսկ ասոր վրայ հազիւ երկու կամ երեք. թէպէտ և ոչ սակաւ վտակներ 12,000՝ բարձրութենէն վար կ'իջնեն լերան կողերը ոռոգելու համար, բայց խճախառն և աւազուտ ըլլալով ջրերն կը կորսուին, և խոր և անմատչելի ձորերու մէջ կ'իջնան, և քիչերն ալ մինչև ստորոտին մօտերը հասնելով աղբիւրներ կը ձևացնեն, թէպէտ և ասոնք ալ աղմուտ գետնին և պնդացեալ մխրոյ մէջ կ'ընկղմին, որով սովորաբար Մասիս ցամաք կը համարուի, և ջրհեղեղին յիշատակին հակատիպ պատկեր մը կը ներկայացընէ, որուն վերջին հանդիսարան համարուած է։— Ձիւներուն հալելովն և ստորնախառն խճից քակուելովն՝ վերէն վար կ'իջնան Որդնուկք կոչուածները, զոր Թուրքք Զիշլաղ կ'անուանեն. որք որդնաձև և փայլուն պաղածներ են, և մէջը վճիտ ջուր կայ՝ շատ համով և քաղցր. անոր համար Երևանայ վերջին սէրտարն ամառ ատեն Ակռուոյ կողմերը գալով, փնտռել և բերել կու տար անոնցմէ։

Այս գաւառիս միակ մնայուն գետն է Սեռաւ չուր Գառաւառ կոչուածը, որ լերան հիւսիսային կողման ստորոտէն կը բղխի, Դաշպուռաղն գիւղին հարաւէն, դանդաղ կերպով դաշտին մէջ վազելով կը դառնայ դէպ յարևելահարաւ և յերասխ կը թափի, խոր վիրապայ դիմացը. վարի կողմերը շատ անդամ տղմուտ և ջրոտ տեղեաց կերպարանք կ'առնու և կ'ածի երբոր ուրիշ մանր վտակներ ալ կու գան կը միանան իրեն հետ։ Ուղղակի հիւսիսէն դէպ 'ի հարաւ Ակռի գիւղին անուամբ գետակ մ'ալ կը թափէր ասոր մէջ, որ մեծ

digitised by A.R.A.R.@

պատառուածին սառամանեաց վրայէն անցնելով, Ս. Յակովբայ քո-
վէն մեծ ձորի մը մէջէն յՕկոռի կ'իջնար, երկուքն ալ թողլով իւր
աջ կողմը՝ այն է արևելք. նոյն ձորէն դէպ 'ի առաջ երթալով կը կոր-
սուէր, և աւանին բնակչաց պիտոյից հաճիւ կը բաւէր։ Մեր նախնի-
քըն այս գետը Գիհնոյ գետ կամ Գիհնեզոյն գետ կ'անուանէին, Գիհնոյ
բլրոյն անուամբ, որ նոյն է կարծեմ Թաքեաւլրուին հետ։— Ա.յս բը-
լուրը 6652' բարձրութեամբ երկուց Մասեաց մէջտեղ առանձին
գագաթով մը վեր կը բարձրանայ, և անկէ վեր արևմուտք—հիւսի-
սային կողմը Ոէրտար—պուշագ լեռնակը կայ 7050' բար՝ բութեամբ։

Ա.յս բլուրը Երևանայ Հիւսէին խան կողմնակալին և անոր հօս չի-
նել տուած աղբեր անուամբ կոչուած է. այս կողմնակալի ամառ ա-
տեն գեղգնացութեան համար հօս կու գար, ուստի և ըստ այնմ՝
ալ բնակութիւններ չինած էր, որք բոլորովին կործանեցան Ռուսաց
հօս մրցելովն։ Աղբիւրը բարեհամ է, չորս կողմը աւազան մի կայ
10' երկայնութեամբ և 5—6' լայնութեամբ, յուրը 3' խոր կ'երևնայ,
և է պայծառ և մաքուր։ Ա.յս տեղեր զուարճալի և խոտաւէտ են, Քիր-
դաց հօտերուն մակաղատեղ և իրենց բնակութիւն. Ակուռոյ բնա-
կիչներն ալ ատեն մը այս տեղերս կը վայլէին։ Ա.յս Գարասու գետն
վերին կամ Մեծ կ'անուանուի, վասն զի ուրիշ երկու գետեր ալ կան,
մէկը Միչին անուամբ, որ նոյն կողմերէն բղխելով, փչ մը վար քան
զաւչինը յերասխ կը թափի, միւսն Ղտորին կամ Փոքր Գարասու,
Ղատարակայ և Շարուրայ միջասահմանին դիմացը Պուրալան բլրոյն
քովէն նոյնպէս յերասխ կը թափի։

Շարուռնակելի։

Քանի մը ամիս յառաջ՝ լրագիրք ծանուցին թէ ռուսական հետազօտութիւն մը յանձնուած էր յաշխարհն Հայոց՝ Շանգը ամուանաց։

Շանապարհորդք քիչ ատենէն կը վերադառնան 'ի հայրենիս՝ կատարեալ առաջ-ջութեամբ. թէպէտ և մեծ նեղութեանց հանդիպելով այն դժուարին ուղևորու-թեան մէջ։

Հետերնին կ'բերեն երկրագիտական և բուսաբանական ընտիր հաւաքմունք մը Արարատ լերան վրայ ժողոված՝ մինչև 3500 մէջք բարձրութեամբ։ Ունին նաև բազմաթիւ մարդաբանական յիշատակք, և կարևոր ազգագրական հաւաքման մը հետ նաև երկու հաղարէն աւելի լուսանկարք։

digitised by A.R.A.R.@